«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում»

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Խամոյան Գոհար

Ուսումնական հաստատություն՝ Արագածոտն մարզի Վերին Սասնաշեն գյուղի Մարտուն Մանուկյանի անվան հիմնական դպրոց

Երևան 2022

Վերապատրաստվող ուսուցչի հետազոտական աշխատանք

Հետազոտության թեման՝ էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում:

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Խամոյան

Արագածոտնի մարզի Վերին Սասանշենի Մարտուն Մանուկյանի անվան հիմանական դպրոց

Վերապատրաստող ուսուցիչ՝

Թալին 2022

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ 1.Էպոսի դերը հայրենասիրության մեջ----------4

Գլուխ 2.Էպոսի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման գործում-----14

Եզրակացություն ----------17

Գրականության ցանկ ----------20

Ներածություն

Սույն աշխատանքի նպատակն է հետազոտել և հասկանալ, թե ի՛նչ է էպոսը և ի՛նչ դեր ունեցել հայ ժողովրդի հոգեբանության մեջ հայրենասիրական գաղափարների ամրապնդման և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում: Հետազոտական աշխատանքում կարևորվում է հայրենասիրությունն անցյալում, իր դրսևորումը ներկայում և ապագայում անցնելիք ճանապարհի կանխորոշումը…Այն միտված է սովորողի մոտ արմատավորել ազգային արժեհամակարգը, այսինքն՝ տվյալ անհատը պետք է գիտակցի իր ինքնությունը, որի շնորհիվ էլ իրեն ճիշտ կդրսևորի հասարակության մեջ և պատասխանատվություն կզգա նախնիներից իրեն ավանդված գերագույն արժեքի՝ հայրենիքի հանդեպ…

Նախորդ դարերում սկսված և չավարտված մարտահրավերները ստիպում են զգոնություն ցուցաբերել: Ուստի անհրաժեշտ է, որ սովորողները, անցյալից դասեր քաղելով, կարողանան իրենց նախնիների չիրականացած ցանկություններն ի կատար ածել…

Այս ճանապարհի առհավատչյան «Սասնա ծռեր» էպոսն է, որտեղ թաքնված է հայ ժողովրդի լինելության հավերժական խորհուրդը:

Հետազոտական աշխատանքով հետամուտ կլինենք բացահայտելու դեռևս չվերծանված այն գաղափարների գաղտնիքները, որոնք թաքնված են «ծուռ» հերոսների և նրանց շիտակ հայրենիքի հավերժության մեջ…

Հետազոտական աշխատանքի իրականացման համար ուսումնասիրվելու է համապատասխան գրականություն և ինտերնետային նյութեր:

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը թարգմանվել է աշխարհի շատ լեզուներով և ունի միջազգային մեծ ճանաչում: Այն ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում: Էպոսի գաղափարախոսությունը լավատեսական է,

այն ներկայացնում է սերը հայրենիքի հանդեպ: Էպոսում կարևորվում է հայրենիքի շենացման, ամրապնդման և հավերժացման գաղափարը:

Հետազոտության հիմնական խնդիրն է՝ ուսումնասիրելով թեմայի վերաբերյալ առկա գրականությունը, ամրապնդել այն միտքը, որ անցյալից պետք է դասեր քաղել, ներկայում ճիշտ գործել ու ապահովել հայրենիքի ապագան: Էպոսի հիմնական գաղափարը կծառայեցվի հայրենասեր անհատի ձևավորման գաղափարին:

Էպոսի դերը հայրենասիրության մեջ

Օ՛, ռամիկ մարդու արդար լեզուն
Հունով հայրենի, չնայած ձեր
Դժնի դպրության-դարե՛ր, դարեր
Իր մաքրամաքուր ջուրն է տարել…
Չարենց

Էպոսը գործածվում է երկու իմաստով՝ լայն առումով գրական երեք սեռերից մեկն է (էպիկական, քնարական, դրամատիկական), նեղ առումով՝ ժողովրդական հերոսական կամ ավանդական վեպ, որը բաղադրվում է վիպական ու պատմահերոսական երկերից, զրույցներից…

Ազգային էպոսը էպիկական բովանդակությամբ էպիկական ժանրի գործ է, որը ավանդաբար ներկայացնում է որևէ ազգի մշակութային կամ ինքնաճանաչողական ոգին, դա կարող է վերաբերվել նաև ինքնուրույնության կամ անկախության ձգտող որևէ էթնիկական կամ լեզվաբանական խմբի: Ազգային էպոսը նաև նկարագրում է տվյալ ազգային էթնոսի ծագման և զարգացման պատմությունը, կամ տվյալ ազգության ինքնորոշման ու ինքնագիտակցման պատմության կարևորագույն դրվագները և այլ ազգային խորհրդանշանների ծագման պատմությունը[1]:

[1] Էպոս/ https://hy.wikipedia.org/wiki/%D4%B7%D5%BA%D5%B8%D5%BD ,10.07.2022

Ժողովրդական բանահյուսության կարևոր նմուշներից է «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսը, որի գոյությունը, հավանաբար, հայ ժողովրդի ձևավորման սկզբնական ակունքներին մոտ է եղել: Հազարամյակների ընթացքում, բանավոր կերպով հղկվելով և մշակվելով, հայտնություն է դարձել: Էպոսի ձևավորումը, ըստ կերպարների անվանումների, ասոցացվում է արաբական խալիֆայության դեմ հայ ժողովրդի՝ 9-14-րդ դարերում մղած ազատագրական պայքարի հետ:

Այդ նույն ժամանակաշրջանում՝ 10-րդ դարում, մեր հարևան երկրում էլ՝ Պարսկաստանի Ֆարս նահանգում եղած ամրոցներում ապրողներն էին կերտում ու երգում ազգային հերոսների սխրանքները, որոնք էլ գրի էին առնվում, որոնց մեջ էլ ապրում էր Իրանի հին փառքը:Հենց նույն դարում էլ այդ ժողովրդական նյութերից Ֆիրդուսին հրաշակերտեց իր «Շահնամե»-ն[2]:

«Սասնա ծռեր» էպոսի առաջին գրի առնողները եղել են պորտուգալացի ճանապարհորդներ Անտոնիո Տենրեյրոն և Մեստրե Աֆոնսոն[3]:

Հայ հանրությանը հայտնի է դարձել միայն 4 դար անց:

Իսկ մինչ այդ՝ 1873 թվականին, հայ բանահավաք Գարեգին Սրվանձտյանը Արմտյան Հայաստանի Մուշ գավառի Առնիստ գյուղի բանասաց Կրպոյից լսում և գրի է առնում հերոսավեպը և 1874 թվականին տպագրում է «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» խորագրով:

1889 թվականին Շուշիում «Դավիթ և Միհր» խորագրով լույս է տեսնում Մանուկ Աբեղյանի պատումը, ով գրի էր առել մոկացի Նահապետ կամ Նախո քեռուց[4]:

Այնուհետև զարմանալի հետաքրքրություն է սկսվում. բանահավաքների ու բանասերների մի հրաշալի փաղանգ է ձևավորվում և գնում դեպի այն անաղարտ ակունքը, որ ժողովուրդն էր հայոց:

Հիշատակության են արժանի բոլոր ասացողներն էլ:

---

[2]:Լեո,հատոր 2,Հայաստան հրատարակչություն,Երևան 1967,էջ 286
[3] Սասունցի Դավիթ., Երևան., 1981, էջ 3:
[4] Նշվ. Աշխատանք, էջ 4:

Ես ուզում եմ խոսել իմ համագյուղացու՝ ասացող Քեռի Թըմոյի մասին, ով Սասնո Ճախրկան գյուղից էր: Այն ինչ ես լսել եմ, լիովին համընկնում է բանագետներ Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի հետևյալ կարծիքի հետ. «Բանագիտական առանձին հարց է այն, որ սասունցի ոչ մի ասացող վեպը չէր համարում հեքիաթ կամ անիրական բան: Ընդհակառակը, նրանցից շատերը, ովքեր լավ են հիշում Սասնո տեղանքը, այն վայրերը, շենքերն ու առարկաները, որոնք կապված են վեպի հերոսների անունների հետ, միաբերան պնդում էին վեպի լիովին պատմական ճշմարտություն լինելը: Սասնո Ճախրկանի գյուղացիները կամ վերջիններիս այստեղի սերունդներն ու հարևանները համառորեն ապացուցում էին, թե Սասունցի Դավթի տոհմը շարունակում է գոյատևել մինչև մեր օրերը: Ճախրկանցի Դավթյանների գերդաստանը, որից և վեպի երբեմնի հայտնի ասացող, այժմ հանգուցյալ Թըմո Դավթյանը, սերում է Դավթի տոհմից. Նրանց պապենական ջրաղացը Ճախրկանում, որի ջրաղացպանն է եղել Թըմոն, ըստ համագյուղացիների, պատկանելիս է եղել Սասունցի Դավթին և սերնդից սերունդ ժառանգաբար անցել է իր տոհմակիցներին:Հավաստում էին, թե Դավթի ջրաղացքարը եղել է հատուկ քար, որ սկսած Սասունցի Դավթի օրերից երբեք չի կռանվել և ինքն իրեն ծլել է, այսինքն՝ կռանվել, նորալուսնի ժամանակ»[5]:

Արագածոտնի մարզի Վերին Սասնաշեն գյուղի հաջորդ ասացողը Մանե Մկրոն էր, ով Ճախրկան գյուղի անվանումը կապում էր Դավթի հորից դուրս գալու ժամանակ ջարդած քարի կտորների հետ: Այդ կտորներից մեկը ընկել էր հենց այդ գյուղում, որը կոչվել է Ճախրկան(ճախրել-սավառնել): Ջրաղացի քարի ինքն իրեն սրվելը տեղի է ունեցել ամեն տարի Դավթի հորից դուրս գալու օրը:

1939 թվականին մեծ շուքով նշվեց «Սասունցի Դավթի» հազարամյակը, և այդ կապակցությամբ կազմվեց էպոսի համահավաք տեքստը:

«Սասնա ծռեր»-ում արտահայտված են համամարդկային գաղափարներ՝ հայրենասիրական, հումանիստական, հավատ հաղթանակի ու ապագայի նկատմամբ:Էպոսը հայ գեղարվեստական ստեղծագործ մտքի ու տաղանդի առհավատչյան է:

Էպոսի կուռ կառուցվածքը, ըստ արտահայտած գաղափարների և թեմաների, չորս ճյուղերում էլ հավասարապես բաշխված է: Ամեն ճյուղ սկսվում է անցյալի հիշատակության խոնարհումներով (ողորմիներով): Այս է հիմքն այն

[5] Սասնա ծռեր., հատոր Գ, Երևան., 1979, էջ 15:

արյունակցական շարունակությանը, որը պարտավորեցնում ու սովորեցնում է հաջորդ սերունդներին նույնը…

Էպոսում բոլոր հերոսների սկզբնավորվելու, ծնվելու ակունքները դիցաբանական են ,առասպելական ,որոնք, պատմական և իրական սաղմի շուրջը պտտվելով, դարձել են սերունդներ դաստիարակող և ապրեցնող ճշմարիտ կերպարներ:Իսկ առանցքայինը հայ ժողովրդի նախնիների այն կեցությթն է ,որ կարողացել է սերնդից սերունդ փոխանցել հայրենի հողին և սովորույթներին հավատարիմ մնալու հայի գենը:

Մեր էպոսի ակունքները շատ ավելի խորն են: Խորենացուց մեզ հասած այն վկայությունը, որ Հայկը, լայնալիճ աղեղը քաշելով, սպանեց Բելին… Արյունոտ նիզակը խրվեց հողի մեջ և զենքի մեր առաջին հաղթանակը, որ ավանդվեց մեզ որպես հող հայրենի, իր մեջ ունի թաքցրած լայնալիճ աղեղի հավերժական ձգված լինելու և ապագայում միշտ առաջանալու և լինելու այդ հողի վրա՝ որպես տեր ու տիրական ուղերձը: Այդ նույն վայրում հետագայում պիտի սովորեն զենք կրել էպոսի բոլորը քաջերը՝ Սանասար, Մեծ Միհր, Սասունցի Դավիթ,Փոքր Միհր…

Հայրենի հողը, որը նախնիներից մեզ ավանդվել է, այսօր էլ կարիք ունի հայ առյուծածին քաջերի և նրանց զենքերի…

Նախկին առասպելադյուցազնական հաղթական ոգին դրվել է պատմական որոշակի հողի վրա: Տիեզերական հակադիր ուժեր մարմնավորող, իրար հակադրվող բարի դյուցազունների և նրանց չար հակառակորդների անզիջում պայքարը եղել է այդ հողի վրա, որ միշտ ավարտվում է բարի դյուցազունների հաղթանակով[6]: Վիպական այս համընդհանրությունը այսօր դարձել է ազգային յուրահատկություն:

Էպոսում հայ ժողովրդի հայրենասիրությունը սկզբնավորվել է Ծովինարի կերպարով: Դիցապատմական այն իրողությունը, որ հայրենի ջրից ծնվեցին Սանասարն ու Բաղդասարը, հենց նրանց ծնունդով էլ սկզբնավորվում է մաքրության այն խորհրդանիշը, որ թաքնված է զուլալ ջրի կյանք պարգևող խորհրդի մեջ: էպոսում մեր բոլոր հերոսներն էլ շիտակ են, ճշմարիտ և արդար և հենց դրանով է, որ նրանք միշտ կարողանում են հաղթել իրենց նենգ, բայց ուժեղ հակառակորդներին:

[6] Սասունցի Դավիթ., Երևան., 1981, էջ 15:

Առաջին ճյուղի գլխավոր հերոսներն են Սանասարն ու Բաղդասարը, որոնք Սասնա բերդի հիմնադիրներն են.ըստ այդմ էլ՝ իրենցից սերված մեր մյուս դյուցազնական հերոսները գերբնական ծագում ունեն: Իսկ երբ ֆիզիկապես դեռ նրանք ուժեղ չէին, նրանց օգնում էին արդեն իրենց հովանավոր աստվածները.«Կրակի և ոսկու փորձությունը» մանուկ Դավթի հետ, «Հացն ու գինին, Տեր Կենդանին, Խաչ պատերազմին վըր իմ աջ բազկին», իսկ երբ արժանի էին դառնում Քուռկիկին հեծնելուն արդեն պաշտպանված էին լինում:

Բոլոր ճյուղերում էլ Քեռի Թորոսն էր Ձենով Հովանի հետ աչք ու ականջ դարձած հետևում ու օգնում Սասնա հերոսներին, քանի որ հզոր ուժի տեր դյուցազունները անչափ միամիտ էին,որը գուցե և պատճառ էր դարձել ինչ-որ տեղ նրանց ծուռ կոչելու: Նրանց մեջ է խտացված ժողովրդի՝ իր սիրելի հերոսներին միշտ թիկունք կանգնելու ու չարից փրկելու ուժը:

Բոլոր հերոսներն էլ, լինելով ուժեղ, առյուծաձև և առյուծածին, ունեին քնարական նուրբ հոգի:

Սանասարից հետո քանի դեռ իր զավակները փոքր էին, հայրենիքի պաշտպանությունը ստանձնում է կինը՝ Դեղձուն Ծամը: Սասունը հարկատու էր Մըսրա Մելիքին, բայց պատահեց այն, որ Մեծ Միհրը կարողացավ դուրս գալ իր միամտության աշխարհից՝ դառնալով Առյուծ Միհր: Եվ երբ արժանի դարձավ Սասունը կառավարելուն, այլևս նախկին միամիտը չէր, սակայն չափից շատ արդար ու բարի սիրտ ուներ:Սասունը Միհրի օրոք այլևս հարկատու չէր Մըսրին:Նրանք ունեին պայման, ով շուտ մահանա ընտանիքի խնամքը անցնի ողջ մնացողին:Եվ երբ Մելիքը մահացավ, Միհրը պայմանն ի կատար ածեց: Սակայն, նորից թշնամու՝ բարեկամ դարձած ընտանիքում նենգությունը հաղթեց: Իսմիլ Խաթունը, իր հայրենիքի հզորությունն ու հավերժությունն ապահովելու համար, կարողացավ Միհրից զավակ ունենալ: Նորից նրան անվանելով Մելիք, ով բնականաբար ժառանգել էր ազնանց ջնսի քաջությունը ,բայց ոչ ազնվությունն ու վեհությունը: Սակայն, երբ Միհրի զգոնությունը վերականգնվեց, նա հասկացավ իր գործած մեղքը և վերադարձավ Սասուն՝ իր սխալներն ուղղելու, թեկուզև դրա համար պիտի հատուցեր կյանքով, միայն թե Սասնա ճրագը վառ պահեր…

Սասնա ճրագը վառ պահող Դավիթը ծնվեց: Քանի որ հայրենի հողը ծնողներին հավասար զորությամբ ու սիրով է պահում ու մեծացնում իր զավակներին, այդպես էլ մանուկ Դավիթը մեծացավ Մըսրում, բայց հայրենի հողի մեղր ու կարագով:Երբ Դավթի կյանքը վտանգված էր Մըսրում առասպելական խոհունությունը

պաշտպանեց Դավթին և վերադարձրեց Սասուն, որտեղ էլ սկսվում է Դավթի դաստիարակությունը՝ գառնարած, նախրորդ,որսորդ…

Եվ երբ արդեն Դավիթն իր արտասովոր ուժով նմանվեց և գերազանցեց իր նախնիներին և երբ տեսավ Մըսրա հարկահավաքներին, պահանջեց Քուռկիկին հեծնելու իր իրավունքը և վերադարձրեց Սասունին դյուցազնական պաշտպան ունենալու իր իրավունքը: Իրավունք,որն այժմեական է…

« 8-րդ դարի երկրորդ կեսում է ապրել Ղևոնդ վարդապետը, որը գրել է 661-788թթ. ժամանակաշրջանում Հայաստանի մեջ տեղի ունեցած անցքերի պատմությունը,որն անփոխարինելի մի աղբյուր է արաբական արշավանքների և նրա տիրապետության հանգամանքները ճանաչելու համար: Ծանոթանալով գործի բովանդակությանը՝ գիտենք, թե որպիսի սրտամորմոք շեշտերով է նա նկարագրում Հայոց աշխարհի տառապանքները, արաբական կեղեքումները: Գործը կարդացվում է մեծ հետքրքրությամբ և իբրև պատմագրություն՝ միանգամայն ճշմարտապատում է»,-այսպես է հիշատակել Լեոն իր «Հայոց պատմության» 2-րդ հատորում:

Որքան էլ Ձենով Հովանը վախենում էր Դավթի կյանքի համար, միևնույն է, լինելու էր այն, ինչ որ եղավ:Դավիթն արդեն Սասունի տերն էր: Ժողովուրդը իր աչքով տեսավ ձեռնունայն հեռացող Մըսրա հարկահավաքներին: Սա Դավթի առաջին հաղթանակն էր:Բայց, միևնույն, է Մըսրա Մելիքը եկավ պատերազմելու ու Սասունը հարկադրելու…

Որքան հուզիչ է այն պահը, երբ Սասունցի Դավիթը կռիվ գնալուց առաջ մնաս բարով է ասում բոլոր դրկիցներին, Ծովասարի պաղ-պաղ ջրերին, հանդ ու չոլերին, քանի որ ինքը գիտեր, որ կռիվ էր գնում և գուցե չվերադառնար, բայց գիտեր, որ իր կյանքով կփրկեր թե՛ հողը հայրենի, թե՛ ժողովրդին հայոց:

«Աղբերներ, քուրեր, դուք մի վախենաք.
Աստծու կամքով կ’ էրթամ ես կռիվ.
Օ, քուրեր, դուք կացեք բարով,
Դուք ինձի քուրություն եք արե.
Օ, մերեր, դուք կացեք բարով,
Դուք ինձի մերություն եք արե...»[7]

[7] Սասունցի Դավիթ., Երևան., 1981, էջ 15

Այս իրադարձությունների հետքերը նորովի վերաձևվելով՝ այսօր հնչում են մեր օրերի ժողովրդական երգերի բազմաթիվ մշակումներում.

«Մարաթուկ Աստվածածին, ծաղիկ, կանաչ, շաղ էր,
Էրնեկ յըս ծաղգի էրթենք, Էրնեկ յըս ծաղկի էրթենք,
Օր սրդիկ չը մարեր…
Մարաթուկ՝ սներ կլոր, վրեն լուսնագ շողեր,
Էրնեկ յըս մոմեր վառենք, Էրնեկ յըս մոմեր վառենք,
Օր մադիկ չը դողեր[8]»…

Սասնա բոլոր հերոսների համար ամենալավ օրն այն օրն էր, երբ բոլորը միասնական պետք է պատերազմեին Մըսրա Մելիքի զորքերի դեմ:

_Տղեկնե՛ր, վե՛ր էլեք, մեր աստված մե՛ծ է.
Կտրում ընկե՛ր է Մելիքի զորքերի մեջ:
Էլեք, մենք էլ ներքի դեհեն առնենք…
Վերի դեհեն Դավիթ առավ, Ներքի դեհեն՝ Քեռի Թորոս[9]…

Դավիթը այդքան հզոր ուժի հետ մեկտեղ նաև միամիտ էր, այնքան միամիտ, որ հավատաց Մելիքի նենգ ծրագրին և հայտնվեց հորում: Իհարկե, նա հորից դուրս եկավ ժողովրդի՝ հանձինս Ձենով Հովանի զգոնության կոչով: Բայց այս անգամ էլ հավատաց Իսմիլի և իր աղջկա նենգություններին, որովհետև չափից դուրս անկեղծ ու միամիտ էր, որոնք ավելի շատ նրա առավելություններն էին: Այս անգամ էլ դիցաառասպելական այն ճշմարտությամբ, որ հաճախ էր պատահել նրան, որի համար էլ Դավիթը վաստակել էր Ծուռ մականունը, վերջին զարկի հնարավորությամբ փրկեց հայրենիքը.

«Կըտրեց քառսուն ջաղացի քար,
Կըտրեց քառսուն գոմշու կաշի,
Կըտրեց հըրեշ Մըսրա Մելքին՝
Ու յոթ գազ էլ մտավ գետին[10]…»

Բնականաբար Սասնա դյուցազունների անպարտելիությունը միայն ու միայն իրենց ձեռքով պիտի խաթարվեր, բայց ոչ գիտակցությամբ և ընդհանրապես դեռևս առասպելական ժամանակներից սկսված այս գործողությունները

[8] Գևորգ Հակոբյան,Քելե՛ լաո՛, Զանգակ հրատարակչություն 2012,էջ 23
[9] Սասունցի Դավիթ., Երևան., 1981, էջ 230
[10] Սասունցի Դավիթ., Երևան., 1981, էջ 241

շարունակաբար կրկնվում են համաշխարհային հանրահայտ դիցաբանական, առասպելական թեմաներում: Այդպես էլ մեր էպոսում, երբ հայր և որդի դյուցազունները ֆիզիկապես նույն ուժերով մենամարտեցին, Դավիթը անիծեց իր հետ մենամարտողին՝ որպես թշնամու՝ չիմանալով, որ իր որդին է՝ Փոքր Միհրը: Ըստ հոր անեծքի՝ Փոքր Միհրը դառնում է անմահ ու անժառանգ, բայց նրան վերապահված է հայ ժողովրդի լինելության ճշմարիտ, բայց չվերծանված խորհուրդը...

«Ով անմասն է հարազատ ժողովրդի ճակատագրին, նա չի կարող հաղորդակից լինել հայրենիքի նկատմամբ տածվելիք բարձր զգացմանը.ում մեջ խլացված են հարազատ հնությունների հետ կապված լինելու բնածին զգացումները…
Նրա մեջ չպետք է զարմացնեն հոգեկան պահանջների բացակայությունը և անտարբերությունը հումանիտար առարկաների նկատմամբ առհասարակ »:

Այս առումով պատահական չէ, որ հայ իրականության մեջ ևս բանագիտության հունավորվելը կապվում է ժողովրդի ազգային ինքնաճանաչման ու զար թոնքի հետ՝ Մառից վկայակոչված տողերի ոգով ու էությամբ:

Էպոսի բոլոր կին հերոսները ոչնչով հետ չեն մնում իրենց առյուծ ամուսիններից: Այնպես, ինչպես Քառսուն Ճուղ Ծամ Դեղձունը, Արմաղանը, Խանդութ խանումը, Գոհար խանումը: Բոլոր հերոսուհիններն էլ իրենց մեջ կրում են ոչ միայն մայրության՝ ի վերուստ տրված անաղարտ բերկրանքը և սերը առ զավակները, այլև ոչնչով հետ չեն մնում իրենց առյուծ ամուսիններից, երբ վտանգված է հայրենիքը:Այնպես ինչպես Դեղձուն Ճուղ Ծամը երկարատև սգից դուրս եկավ այն ժամանակ, երբ Դավիթը Քուռկիկի հետ միասին իջավ կռվի դաշտ, որ Մըսրա հարամ շունչը չպղտորի Սասնա հողն ու ջուրը: Քառսուն-Ճուղ Ծամի կերպարի մեջ խտացված ներկայանում են մայր իշխանության ժամանակների տան տիրուհուն բնորոշ մի շարք գծեր: Այդ շրջանի կարևոր հատկանիշներն են եղել կնոջ դերը ընդհանուր համայնքում, ամուսնության նախաձեռնումը, որոշ հարցերում կնոջ և տղամարդու իրավահավասարությունը[11]:

Անձնազոհությունն ավելի է խտացված Արմաղանի կերպարում:Երբ Միհրը յոթ տարի հեռացել էր Սասունից՝ մնալով Իսմիլ Խաթունի մոտ, Արմաղանը երդվել է այլևս չներել Միհրին: Սակայն, երբ պետք էր Սասնա ճրագը վառ պահվեր, նա երդմնազանց եղավ, որի համար կյանքով հատուցեց: Ընդհանրապես էպոսում

[11] https://m.mamul.am/am/post/101345

այսպիսի մի երդմնազանցության համար պատժվեց ժողովրդի ամենասիրելի հերոսը՝ Դավիթը՝ սպանվելով չինի աչքերով իր դստեր ձեռքով.

«Իմ ցեց իմ անձից է,
էդ իմ սերմն էր, որ ինձ սպանեց»[12]:

Էպոսում ընդհանրապես կնոջ և տղամարդու հավասարությունը տեսանք հայրենասիրության և անձնազոհության մեջ, որին հասել էին ինքնաճանաչողության և ինքնահաստատման ճանապարհով:Այնպես, ինչպես Խանդութի և Դավթի մենամարտից հետո ասաց Քեռի Թորոսը.«Առյուծն առյուծ է, էղնի էգ թե որձ», որպես պատասխան Դավթին, ով զայրացել էր Խանդութի հետևյալ խոսքերից. «Դու քո հոր կտրիճն ես, ես էլ՝ իմ»[13]:

Խանդութը ինչքան որ դիցաբանական, առասպելական կերպար է, այնքան էլ իր մեջ ամփոփում է սիրող կնոջ կերպարը, ում ապշեցուցիչ անձնազոհության է տանում այն իրողությունը, որ Դավթի մահից հետո անիմաստ է իր ապրելը:

Խանդութի մահով ավարտվում է էպոսի առասպելածին հերոս կանանց կերպարները:Ինչքան ժամանակը առաջ է գնում, այնքան ասացողների մոտ հանձին Փոքր Միհրի կնոջ՝ Գոհարի կերպարի դիցաբանական ելևէջումները կարծես պակասում են:

Սակայն զարմանալիորեն հետաքրքիր հանգուցալուծում է տրված էպոսի վերջին ճյուղին,որտեղ արտացոլվում է դյուցազնական քաջերի թողած ճանապարհը շարունակողների առավելություններն ու թերությունները և, որպեսզի առասպելական ժողովրդի սիրած հերոսները մնան այն բարձրակետին,որտեղ նրանց դրել է հեղինակը՝ ժողովուրդը,անթերի պիտի լիներ նաև ավարտը…

Եվ աշխարհի ոչ մի էպոսում չենք գտնի այն իմաստուն վերջաբանը, որը տրված է հայ ժողովրդի էպոսի չորրորդ ճյուղում՝ Փոքր Միհրի կերպարով: Ժամանակների քաղաքական վայրիվերումների հորձանուտում, բնականաբար, հայ ժողովրդի երազանքներն ու ձգտումները ժամանակ առ ժամանակ պետք է ենթարկվեին փոփոխությունների՝ կրելով տվյալ ժամանակաշրջանին յուրահատուկ գործողությունների հետևանքները: Եվ ճիշտ կողմնորոշվելու համար երբեք չի կարելի անտեսել անցյալը և կտրվել նրա տված դասերից…

[12] Սասունցի Դավիթ., Երևան., 1981, էջ 288:
[1313.]Սասունցի Դավիթ., Երևան., 1981, էջ 265:

Էպոսի չորրորդ ճյուղում արտացոլված է հողի խըլբ /անարդար/ դառնալու գաղափարը: Մենք գիտենք՝ հողը խըլբ չի դառնում, մարդկային գիտակցությունն է անընդհատ փոփոխության ենթարկվում:

Փոքր Միերի կերպարով արտահայտվում է այն միտքը, որ կարելի է անցյալից սովորել, հասկանալ և գտնել ճիշտ ճանապարհը: Այո՛,էլ ով, եթե ոչ Միերին ճիշտ խորհուրդ պիտի տար երբեք նրանից չհեռացած և միշտ իրեն ուղեկցող ծնողների արդար և ճշմարիտ հոգին: Այսպես է կամեցել ժողովուրդը օգնել իր վերջին դյուցազնական հերոսներին՝ Քուռկիկ Ջալալուն և Փոքր Միերին:

Արդյունքն այն է, որ երկրագնդի վրա երբեք չեն դադարել պատերազմները: Ինչու՞ Միերը փակվեց Ագռավաքարում և ինչի՞ է սպասում Միերը: Իսկ ժամանակը, որն երբեք չի ընդհատվում, նա տերն է ճշտին ու սխալին, արդարին ու անարդարին: Այդ միայն Սասնա հերոսները ժամանակի և իրականության անհամապատասխանությունից պետք է հասկանային և զգուշացնեին հաջորդ սերունդերին՝ հանձին Փոքր Միերի:

Իսկ,երբ Փոքր Միերը չգիտեր՝ ինչպես շարունակեր ապրել, նրան օգնում է ծնողների խորին խորհուրդը՝ ճիշտ կողմնորոշվելու: Իզուր չէր, որ բոլոր ասացողների մոտ էլ ամենաշատ սիրված հերոսը Դավիթն էր, և հենց նա Միերին ցույց տվեց անարդար աշխարհից հեռանալու և Քուռկիկի հետ միասին Ագռավաքարում փակվելու առանձնահատուկ խորհուրդը:

Միեր. «Հերի՛կ,վե՛ր էլի ,հերի՛կ,վե՛ր էլի,
Սասնա ջոջ տնեն անմաս եմ,էլի,
Աշխրքի էրեսեն անմաս եմ,էլի:
Հերի՛կ,վե՛ր էլի ,հերի՛կ,վե՛ր էլի,
Էսօր մռմուռ ձուն էկեր է,
Քո որդի Միերի ոտքեր կը մռմռան:
Հերի՛կ,վե՛ր էլի ,հերի՛կ,վե՛ր էլի
Քո անուշ հոտուն փափագ մնացի,
Քո անուշ խոսքերուն կարոտ մնացի,
Էնքան մենակ աշխարք գնացի»:

Դավիթ.«Ո՛րդի, վինչըխ անեմ,
Ո՛րդի, վինչըխ անեմ,
Գույն,կերպ թափե էրեսես,
Լուս կտրվե աչքերես,
Օձ,կարիճ բուն դրե վերաս:
Բոլ է ման գաս վեր աշխարքին,
Բոլ է ման գաս…
Քո տեղ Ագռավու քարն է,
Աշխարք ավերի, մեկ էլ շինվի,
Որ գետին քո ձիու առջև դիմանա
Աշխարք քոնն է»[14]:

[14] Սասունցի Դավիթ,1981,էջ 313

Ըստ իս՝ միասնական լինելու խորհուրդն էր, որ մեր ժողովուրդը ստացավ իր իմաստուն նախնիներից, և ինչքան էլ ժամանակը առաջ գնա, միևնույն է, դեռ երկրագնդի վրա անարդարությունները, թե՝ պետությունների միջև իրենց «արդար անարդարացիություններով», թե՝ երկիր մոլորակի բոլոր բնակիչների՝ իրենց երկնային տերերի դեմ կատարած մեղքերով, որոնք, ըստ իս, այն ժամանակ կուղղվեն, երբ, որ Միերը Ագռավաքարից դուրս գա…Իսկ ե՛րբ դուրս կգա, երբ արդարություն լինի. Երբ ցորենը դառնա քանց մասուր մի, երբ մեղավոր մարդ չլինի, և գարին դառնա քանց ընկուզ մի…

Անգնահատելի ուղերձ է երկրագնդի ողջ մարդկությանը.

-փնտրե՛ք ու կգտնեք ճշմարտությունը հայոց էպոսում…

Եվ գտնողը կմարգարեանա…

Հիշենք զօղորմին, քառսուն օղորմի ,

Մեր փիր վարպետին, որ մեզի պատմեց:

Հիշենք զօղորմին,քառսուն օղորմի,

Ականջ արողի հոր ու մոր հոգուն[15]:

Էպոսի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

[15] Սասունցի Դավիթ,1981,էջ 314

Իր անցած ճանապարհով հայ ժողովրդական էպոսը փոփոխության է ենթարկվել ժամանակի ոգուն համապատասխան, սակայն միշտ էլ պահել է ընդհանուր գծեր: Աբեղյանը գրում է, որ հայ հին ավանդավեպի ընդհանուր բնավորությունը մնում է «Պարսից պատերազմի» մեջ, սրանը՝ «Տարոնի պատերազմի»-ի մեջ, իսկ վերջինի բնավորությունն «այնուհետև էական գծերով մնում է նոր վեպի՝ «Սասնա ծռեր»-ի մեջ, որտեղ և ժողովրդական տարրը ռամիկ ժողովրդի կենցաղն ու գաղափարները կարևորվում են: Վեպը կերպարանափոխվում է պատմական առանձնահատուկ դեպքերի ու անձերի ազդեցությունից, ինչպես Մուշեղի ու Վահանի տեղ անցել է Դավիթը, պարսիկների տեղ անցել են արաբացիները, Մըսրա Մելիքները, իսկ Տարոնի տեղ՝ Սասունը[16]…»:

«Սասնա ծռեր»-ի մեջ արտահայտված է ժողովրդի երազանքները, ապրումները, ձգտումները: Իհարկե այս բոլորն էլ արտահայտված են հենց ժողովրդի լեզվով պատկերված նիստուկացով, հայ դարավոր սովորույթներով, որոնց զուգահեռ կամ իրար մեջ շաղախված հավատալիքներով և միշտ ազատագրական պայքար մղող սերունդների ժամանակ առ ժամանակ վերընձյուղվող սխրանքներով: Էպոսում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի հետ միասին նկարագրվում է կենցաղը, սովորույթները, հավատալիքները, մտածումները, ապրումները, գովերգվում է հայրենասիրությունն ու ազատասիրությունը, անկեղծությունն ու ազնվությունը, անձնազոհությունը, հաստատակամությունը, լավատեսությունը, աշխատասիրությունը: Եվ հազարամյակներ շարունակ այս ամենը բազում սերունդներ է դաստիարակել և այժմ էլ հանդիսանում է այն ոգևորիչ աղբյուրը, որից սնվում ենք ամենքս էլ մեր չափով:

Էպոսի ողջ սյուժեն ընդհանրանում է հակադիր կերպարների գործողություններով: Հակադրման պատճառը հայոց հողն է, որը ժամանակ առ ժամանակ ասպատակվում և գրավվում է էպոսում արաբների կողմից, բայց այնտեղ խտացված են նաև մեր դարավոր թշնամիների անարդար գործողությունները, ասել է թե՝ հայ ժողովրդի մղած ազատագրական պատերազմները: Այստեղ արժևորվում է մեր արդարացի իրավունքը՝ պաշտպանելու, ապրելու, շենացնելու հայրենի հողը: Սակայն միշտ էլ մեր ուժեղ թշնամիները ունեցել են բնավորության մի այնպիսի գիծ, որը կոչվում է

[16] Մ.Աբեղյան,Հայ հին գրականության պատմություն,հ.1,էջ 427

նենգություն, խորամանկություն, ագահություն, որին մենք միշտ հակադրվել ենք շիտակությամբ, պարզությամբ, քչով բավարարվելով…

Երբ Դավիթը սպանեց Մելիքին, Մսրա մնացած զորք, զորական կանչեց, հրամայեց, ասաց.

-Ամենիդ իրավունք կըտամ.

Ուր տեղեն էկեր եք, էլեք,գնացեք ձեր տեղ:

Էլեք ,գնացեք ու ձեր տներ նստեք…

…Մեկ էլ չ'էլնեք ու գաք վեր Սասնա…

…Մեկ էլ, որ զենք առնեք մեր դեմ,

Թե որ դուք կռվի գաք վեր մեզ…

…Տ'էլնի ձեր դեմ Սասնա Դավիթ,

Տ'էլնի ձեր դեմ Թուր Կեծակին:

Դավիթը խաղաղ և ապահով կյանք է ցանկանում բոլոր ժողովուրդներին: Սա ինչ է, եթե ոչ ժողովրդավարություն ու իրավահավասարություն, պետության կառավարման այսօրվա թերևս ամենակարևոր երկու արժեքները:

Սրվանձտյանց բանահավաք-բանագետի «Գրոց ու բրոց» գրքի երկրորդ մասում զետեղված «Սասունցի Դավիթ և Միերի դուռ» մինչ այդ անհայտ ազգային վեպի պատումը ունի պատմական բացառիկ նշանակություն, այն աչքի է ընկնում նաև ըստ էության. իր ընդարձակ ծավալով, հարուստ բովանդակությամբ, գեղարվեստական հատկանիշներով և լեզվի հարազատությամբ :

Ըստ Սրվանձտյանցի, յուրահատուկ է Միերի դիցաբանական էությանը վերաբերող կռահումը, որպես «…աշխարհի բախտը դարձնող և ոսկի բաշխող Չաստված մը, գուցե ՄՀերն ինքը ՄՀեր Մեծն լինի և իր դուռը ուղղակի հարավո հանդեպ կամ արևու լինելով՝ պաշտելու պատշաճ»:«Սասնա ծռերի»

Ուղղամտությունը, ճշմարտախոսությունը Դավթի ամենամեծ սրբություններից են. նա ունի մարդկային խոր արժանապատվություն:Նա երբեք խորամանկության, խաբեբայության չի դիմում:

Հատկապես մեծ է Օրբելու դերը մեր էպոսի միջազգային ճանաչման առումով: Ըստ Ղանալանյանի՝ 1939թ.–ից սկսած իր հետազոտություններով հարստացնում-խորացնում է էպոսագիտությունը նոր մեկնություններով: Որքան էլ գերբնական հատկություններով կապված են բնության ուժերի հետ, «Ծռերի» միմյանց հաջորդող սերունդները ավելի են մերձենում երկրային մարդուն[17]:

[17] Մ.Աբեղյան,Հայ հին գրականության պատմություն,հ.1,էջ 427

Բանագետը անդրադառնում է հունական, հնդկական, իրանական և այլ ժողովուրդների դիցաբանական-վիպական կերպարների հետ հայոց դյուցազնավեպի հերոսների համեմատական քննությանը՝ հանգելով ելակետային հետևյալ եզրակացությանը. եթե՝ «…ջրով հարուստ, սակայն ցանկատարածություններով աղքատ Հելլադայում Անթեյն իր ուժը ստանում է հողից, իսկ Հայաստանի պայմաններում, որտեղ ժողովրդի բարօրությունն ամբողջապես կախված է ոռոգումից, Սանասարի զորության աղբյուրը ջուրն է: Ասել է թե՝ ժողովրդական հոգեբանության գործոնը նրա դիցաբանական մտածողությունից սկսած, ամեն դեպքում չունեցածն ունենալու, աստվածացնելու, այն տենչալու տրամաբանությունն է[18]:»

Հայ ժողովուրդը այսօր էլ ունի չիրականացված երազանքները այժմեական դարձնելու և իկատար ածելու նպատակաուղղվածություն, որը կլինի ամեն վերջի նոր սկիզբ…

[18] Ալմաստ Զաքարյան,Գրականության և պատմության ընթացքները,1989թ.,էջ 362

Եզրակացություն

Հետևյալ հետազոտական աշխատանքը կարևորվում է նրանով, որ սովորողները, և ոչ միայն սովորողները, գիտակցեն, հասկանան, իմանան, որ Հայաստան հայրենիքը հայ մարդու համար, հայ ազգի համար ապրելաձև է, կեցության խորհուրդ, արժեք՝ անանցանելի:

Վերոնշյալ աշխատանքում արտացոլվեց այն միտքը, որ պատմականորեն բուն Հայաստանը հայկական լեռնաշխարհն է, այն բնիկ երկիրն ու հայրենիքը, որտեղ հաղթել է Հայկը Բելին, ասել է թե՝ Դավիթը Մելիքին և հենց այդ վայրում է՝

- առաջացել, կազմավորվել և զարգացել է հայ ժողովուրդն ու հայկական քաղաքակրթությունը, հանձինս «Սասնա ծռեր» էպոսի,
- ստեղծվել, ապա հազարամյակներով ընթացել ու մաքառել ու մաքառում է հայկական պետականությունը.
- ձևավորվել են հայերի ազգային նկարագիրն ու բնավորությունը, սովորույթներն ու ավանդույթները,

Հայրենիքը տարածք է + ժողովուրդ + ժամանակ՝ իր անցյալով, ներկայով, ապագայով...

Հավերժությունը ինքնահոս է ժամանակի առումով, բայց ամեն ժամանակահատված տվյալ հայրենիքում դրոշմվում է իր՝ոչ միայն տարածքով, այլև ինքնատիպ ժողովրդական մտածումով, որը վերերկրային է, որն այն բարձրագույն արժեքն է, որ ինքնադրսևորվում է միայն տվյալ տարածքում ու ժամանակում, որը կարող է դառնալ ցանկացած ժողովրդի համար հաստատուն վկայության ճանապարհ՝ անցյալից ներկա և հավերժություն...

Հայ ժողովրդի հավերժական ճանապարհի հաստատուն վկայագիրն է «Սասնա ծռեր» Էպոսը: Հայ ժողովուրդը, որի կենսական արմատները սնվում են Աստծուց իրեն բաժին հասած հողից, որի վրա երբեք չեն կորչել Քուռկիկի սմբակների

հետքերը, որը միշտ պահպանվել է Թուր-Կեծակիի դիպուկ զարկերով, որը սնվում է իր վրա ապրող ժողովրդի յուրակերպ, մաքուր, ազգային մտածողությամբ, որն այդ տարածքում դառնում է բերդ ու ամրոց, տաճար ու վանք /Սասնա բերդ, Մարաթուկ Աստվածածին.../, տուն ու օջախ, շեն ու ոստան, խաչքար ու ... մի խոսքով՝ մնայուն նյութական արժեք, հենց դա է հայրենիքը, տվյալ դեպքում՝ Սասնա ծռերի հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը:

Մեր էպոսածին հերոսները իրենց կեցությամբ ու գիտակցությամբ ի սկզբանե հավերժ միմյանց են շաղկապված: Լինելով ջրածին և հողածին՝ մեր հերոսները իրենց գիտակցությամբ անհասանելի վերերկրային մտածողություն ունեն, որով նրանք կարողանում էին միշտ իրենց կեցության տարածքի տերը մնալ: Եվ միթե Ագռավաքարում փակված Քուռկիկն ու Փոքր Միերը, հենց կեցության ու գիտակցության այդ խորհուրդը չեն ներամփոփում: Եվ այդ խորհրդի հզոր պաշտպանը մեր երկնային Տերն է, քանի որ Ագռավաքարը բացվում է միայն Համբարձման և Վարդավառի տոն օրերին...Ասացողները պնդում են, որ իրենց աչքով են տեսել...Այո՛, ժամանակ առ ժամանակ պատերազմել ենք, նվաճվել ենք, բայց հաղթել ենք ու դեռ պիտի հաղթենք...Ճիշտ է, բոլոր ժամանակներում էլ հայ ժողովրդի նպատակը մեկն է եղել՝ պահել, պահպանել և շենացնել հայրենիքը, որով անցան էպոսի բոլոր հերոսները՝ Ծովինար,/մայր/, Սանասար և Բաղդասար/որդիներ/, ովքեր հիմնեցին Սասնա բերդը: Ժողովրդի իմաստուն միտքը Բաղդասարին թողեց անժառանգ՝ հավանաբար մեկ Աստված, մեկ թագավոր միասնականությունից ելնելով: Առյուծ Միեր, Ձենով Օհան, Ցռան Վերգո. առաջինը քաջությամբ հավասարվեց և գերազանցեց իր Սանասար հորը: Ձենով Օհանը իր մեջ ներամփոփում է ժողովրդի միշտ արթուն ականջ ունենալու և օրհասական պահին փրկելու Սասնա հերոսներին, այնպես ինչպես մեր օրերում Արցախյան պատերազմների ընթացքում վարվեց հայ ժողովուրդը: Ցռան Վերգոն այդ մականունը ստացել է անկայուն բնավորության և վճռական պահին ճիշտ չկողմնորոշվելու պատճառով: Դավթի ճյուղում աշխատանքի վերոնշյալ հատվածներում, ներկայացված է նրա կերպարը՝ ըստ «Սասնա ծռեր» էպոսի, որն իր մեջ ամփոփում է մեր ժողովրդի դարավոր երազանքը՝ պահել, պահպանել և շենացնել այն հողը, որ ավանդ ես ստացել քո նախնիներից: Երբեք չընկրկել, նույնիսկ ամենահզոր թշնամուց: Սա անփոխարինելի պատգամ է նախնիներից:

Մեր այս աշխարհացունց պատերազմական օրերին ու իրավիճակներում զգոն լինենք, որովհետև մեզ սնած կենսատարածքը միշտ էլ օտար նվաճողներին ձգել է, ովքեր միշտ էլ եղել են ու կլինեն...

Հայ ժողովրդի ապագան այնպես, ինչպես Սասնա ծռերի մոտ հզոր, անկախ ու ազատ հայրենիք ունենալն է :

Եվ այն ունենալու համար, երբեք չի կարելի զգոնությունը թուլացնել, այնպես ինչպես էպոսում. «Ով քնած է, արթուն կացե՛ք, ով արթուն է, ձի թամբեցե՛ք...»

21-րդ դարում մարտահրավերները նույնն են, ինչ հազարամյակներ առաջ: Եվ եթե մենք կանք՝ որպես ազգ, դա եղել է միայն հայրենիք և պետականություն ունենալու արդյունքում: Դաժան է, բայց իրականություն. Հայրենիքին կյանք են տվել և տալիս են հազարավոր նվիրյալներ...

Եթե հայ ժողովուրդը դադարեցնի պայքարը հայրենիքի համար, կդատապարտվի կործանման...

Հայության ապագան կարելի է ապահովել միայն ու միայն ազգային պետականության շրջանակներում, ազգային արժեքները էլ ավելի կենսունակ դարձնելով և որը հնարավոր է միայն Հայաստան հայրենիքում:

Հավելում. Այս աշխատանքն սկսելուց առաջ հարցրի մի բանիմաց մարդու.

- Ո՞րն է էպոսի դերն այսօր, պե՞տք է էպոսը մեզ այսօր:

Նա զարմացավ և զայրացած արձագանքեց՝ հեգնելով.

-Դե ասա, թե Կտակարանն էլ ու՞մ է պետք...

Գրականության ցանկ

1. Էպոս/ https://hy.wikipedia.org/wiki/%D4%B7%D5%BA%D5%B8%D5%BD
2. Լեո,հատոր 1,Հայաստան հրատարակչություն,Երևան 1967
3. Լեո,հատոր 2,Հայաստան հրատարակչություն,Երևան 1967
4. Սասունցի Դավիթ., Երևան., 1981,
5. Մանուկ Աբեղյան «Դավիթ և Միհր»
6. Սասնա ծռեր., հատոր Գ, Երևան., 1979
7. Սասնա ծռեր, սովետական գրող հրատարակչություն, Երևան, 1977թ.
8. Գևորգ Հակոբյան,Քելե՛ լաո՛, Զանգակ հրատարակչություն 2012,էջ 23
9. https://m.mamul.am/am/post/101345
10. Մ.Աբեղյան,Հայ հին գրականության պատմություն,հ.1,
11. Ալմաստ Զաքարյան,Գրականության և պատմության ընթացքները,1989թ.,
12. Չարենց, բանաստեղծություններ
13. Մովսես Խորենացի «Հայոց պատմություն»
14. Հայ գրական քննադատական քրեստոմատիա
15. Հայ գրականության մեթոդիկա, Գ. Ջուհարյան, Երևան 1980թ.
16. Հայ հին գրականության պատմություն, Երևան 1976